ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 464-Ն	*Տեսակը*	Պաշտոնական Ինկորպորացիա
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2015.05.13/27(1116).1 Հոդ.360.13	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	30.04.2015
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	06.05.2015
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	23.05.2015	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԵՎ ՂԵԿԱՎԱՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԻ, ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԻ ԿԱՄ ԽԱՂԱՏԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՄԲ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՁԵՎԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ապրիլի 2015 թվականի N 464-Ն

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԵՎ ՂԵԿԱՎԱՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԻ, ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԻ ԿԱՄ ԽԱՂԱՏԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՄԲ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՁԵՎԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(վերնագիրը լրաց. 25.08.16 N 912-Ն)

Հիմք ընդունելով «Շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4.3-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել՝

1) կազմակերպչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու և անձին ղեկավար պաշտոնում նշանակելուց հետո լիազոր մարմնում ստուգում անցնելու համար շահումով խաղի կամ ինտերնետ շահումով խաղի կամ խաղատան կազմակերպչի միջնորդությամբ լիազոր մարմին տեղեկություններ ու փաստաթղթեր ներկայացնելու կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) անձի կամ փոխկապակցված անձանց կողմից կազմակերպչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նպատակով ներկայացվող հայտարարագրի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) անձին կազմակերպչի ղեկավար պաշտոնում նշանակելուց հետո ստուգում անցնելու նպատակով լիազոր մարմին ներկայացվող հայտարարագրի ձևը՝ համաձայն N 3 հավելվածի:

(1-ին կետը լրաց. 25.08.16 N 912-Ն)

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Հ. Աբրահամյան

2015 թ. մայիսի 6
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2015 թվականի
ապրիլի 30-ի N 464-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԿԱԶՄԱԿԵՐՊԶԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԵՎ ԱՆՁԻՆ ՂԵԿԱՎԱՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒՑ ՀԵՏՈ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԻ, ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԻ ԿԱՄ ԽԱՂԱՏԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԶԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՄԲ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

(վերնագիրը լրաց. 25.08.16 N 912-Ն)

1. Սույն կարգով կարգավորվում են անձի կամ փոխկապակցված անձանց կողմից մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով կազմակերպչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու և անձին ղեկավար պաշտոնում նշանակելուց հետո լիազոր մարմնում ստուգում անցնելու համար շահումով խաղի կամ ինտերնետ շահումով խաղի կամ խաղատան կազմակերպչի միջնորդությամբ լիազոր մարմին տեղեկություններ (այսուհետ՝ հայտարարագիր) և փաստաթղթեր ներկայացնելու հետ կապված հարաբերությունները:

(1-ին կետը լրաց. 25.08.16 N 912-Ն)

2. Անձի կամ փոխկապակցված անձանց կողմից մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով կազմակերպչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու, նաև ղեկավար պաշտոնում նշանակելուց հետո ստուգում անցնելու նպատակով անձինք «Շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետներում լիազոր մարմին են ներկայացնում համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի ապրիլի 30-ի N 464-Ն որոշման 1-ին կետի 2-րդ կամ 3-րդ ենթակետերով սահմանված հայտարարագրերը և սույն կարգով սահմանված անհրաժեշտ կից փաստաթղթերը:

3. Անձի կամ փոխկապակցված անձանց կողմից մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով կազմակերպչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու դեպքում հայտարարագրին կից ներկայացվում են նաև հայտարարագրում նշված բոլոր ֆիզիկական անձանց՝ անձը հաստատող փաստաթղթերի պատճենները, ինչպես նաև արտասահմանում գրանցված իրավաբանական անձանց գրանցումը հավաստող՝ պատշաճ կերպով վավերացված փաստաթղթերը:

4. Ղեկավար պաշտոնում նշանակվելուց հետո ստուգում անցնելու նպատակով անձը հայտարարագրին կից լիազոր մարմին է ներկայացնում նաև ղեկավար պաշտոն զբաղեցրած անձի՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը և ղեկավար պաշտոնում նշանակելու համար հիմք հանդիսացած փաստաթղթի (հրաման, արձանագրություն և այլն)՝ կազմակերպչի կողմից հաստատված պատճենը:

5. Օտարերկրյա քաղաքացիները կամ մշտական բնակություն ունեցող անձինք լիազոր մարմին են ներկայացնում (առկայության դեպքում) նաև իրենց քաղաքացիության պետության կամ մշտական բնակության վայրից համապատասխան մարմնի կողմից տրված և պատշաճ կերպով հաստատված՝ դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածություն չունենալու, կամ դատվածությունն օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված լինելու մասին տեղեկանք, ինչպես նաև համապատասխան տեղեկանք ֆինանսական, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ զբաղեցնելու իրավունքի սահմանափակում չունենալու մասին:

6. Օտարերկրյա կազմակերպությունները լիազոր մարմին են ներկայացնում նաև կազմակերպչի նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետեր, փայատեր կամ մասնակից կամ նրանց հետ փոխկապակցված անձ հանդիսացող իրավաբանական անձանց նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետիրոջ, փայատիրոջ կամ մասնակցի կամ տնօրենի վերաբերյալ՝ սույն կարգի 4-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

7. Հայտարարագիրը և սույն կարգով սահմանված այլ անհրաժեշտ փաստաթղթերը կարող են ներկայացվել

էլեկտրոնային համակարգի միջոցով՝ սույն կարգով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 24-ի N 1283-Ն որոշմամբ սահմանված կարգով կամ թղթային տարբերակով:

8. Թղթային տարբերակով հայտարարագիրը և սույն կարգով սահմանված այլ անհրաժեշտ փաստաթղթերը լիազոր մարմին են ներկայացվում առձեռն կամ փոստային առաքմամբ:

9. Հայտարարագիրը և սույն կարգով սահմանված այլ անհրաժեշտ փաստաթղթերը լիազոր մարմին ներկայացված են համարվում առձեռն ներկայացնելու դեպքում՝ լիազոր մարմնի կողմից՝ ստացականի, իսկ փոստի միջոցով՝ փոստի կողմից համապատասխան անդորրագրի տրամադրման պահից:

10. Հայտարարագիրը լրացվում է հնարավորինս պարզ, հակիրճ, միանշանակ ընկալվող հայերենով, «Յունիկոդ» կոդավորմամբ տառատեսակով:

11. Հայտարարագիրը և սույն կարգով սահմանված այլ անհրաժեշտ փաստաթղթերը էլեկտրոնային եղանակով ներկայացնելու դեպքում դրանք ներկայացնելու պահանջը համարվում է կատարված, եթե անձը տեղեկատվական համակարգում համացանցի միջոցով լրացնում է դիմումի համար անհրաժեշտ տեղեկատվությունը և փաստաթուղթը հաստատում է էլեկտրոնային ստորագրության միջոցով: Հայտարարագրի և սույն կարգով սահմանված այլ անհրաժեշտ փաստաթղթերի՝ լիազոր մարմնում մուտքագրված լինելու փաստը հավաստվում է նույն աշխատանքային օրվա ընթացքում՝ հետադարձ ծանուցմամբ, որը պարունակում է 12-նիշանոց ծածկագիր:

(հավելվածը լրաց. 25.08.16 N 912-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Դ. Հարությունյան

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2015 թվականի
ապրիլի 30-ի N 464-Ն որոշման

Ձև

ԱՆՁԻ ԿԱՄ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ

1. Կազմակերպչի տվյալները՝

1) անվանումը

2) պետական գրանցման համարը

3) ՀՎՀՀ-ն

4) լիցենզիայի համարը

5) գտնվելու վայրը

6) գործունեության իրականացման վայրը

7) կապի միջոցները՝

ա. հեռախոսահամարը

բ. էլեկտրոնային փոստը

2. Մասնակցության ավելացման ձևը՝

1) կազմակերպչի՝ այլ մասնակցից (մասնակիցներից) բաժնեմասի ձեռքբերում՝

ա. բաժնեմաս ձեռք բերող մասնակից (անունը, ազգանունը և անձնագրի տվյալները կամ անվանումը և պետական գրանցման համարը),

բ. օտարող մասնակից (անունը, ազգանունը և անձնագրի տվյալները կամ անվանումը և պետական գրանցման համարը).

2) բաժնեմասի ավելացում կազմակերպչի կանոնադրական կապիտալում՝ նոր ներդրման արդյունքում՝ ներդրող մասնակից (անունը, ազգանունը և անձնագրի տվյալները կամ անվանումը և պետական գրանցման համարը).

3) մասնակցի բաժնեմասի ավելացում այլ մասնակիցների բաժնեմասերի՝ ընկերության կողմից հետգնման արդյունքում՝

ա. հետգնման արդյունքում նշանակալից մասնակցություն ձեռք բերող մասնակից (անունը, ազգանունը և անձնագրի տվյալները կամ անվանումը և պետական գրանցման համարը),

բ. բաժնեմասը ընկերությանը վաճառող մասնակից (մասնակիցներ) (անունը, ազգանունը և անձնագրի տվյալները կամ անվանումը և պետական գրանցման համարը).

4) Այլ (մասնավորեցնել):

3. Ներդրման ծագման աղբյուրների մասին տեղեկություններ և հիմնավորումներ՝

_____

_____

_____

4. Նշանակալից մասնակցություն ձեռք բերող մասնակցի իրական շահառուներ՝

1) իրական շահառուները համընկնում են մասնակցի հետ (այլ շահառուներ չկան).

2) իրական շահառուներ առկա են (տեղեկություններ վերջիններիս մասին)՝ անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրային տվյալները կամ անվանումը և գրանցման համարը:

5. Սույն հայտարարագիրն ստորագրելով և լիազոր մարմին ներկայացնելով՝ հայտարարում և հավաստում եմ, որ նշանակալից մասնակցություն ձեռք բերող բաժնետերը (բաժնետերերը), փայատերը (փայատերերը) կամ մասնակիցը (մասնակիցները) կամ նրանց իրական շահառուները, կամ նրանց հետ փոխկապակցված անձինք՝

1) չի հանդիսանում այնպիսի ֆիզիկական անձ, որը՝

ա. դիտավորությամբ կատարված հանցագործության համար ունի դատվածություն, և դատվածությունն օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված չէ,

բ. օրինական ուժի մեջ մտած դատավճռով զրկվել է ֆինանսական, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ զբաղեցնելու իրավունքից,

գ. սնանկ է ճանաչվել և ունի չմարված (չներված) պարտավորություններ,

դ. նախկինում պատճառ է հանդիսացել խաղատան, շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի կազմակերպչի կամ այլ անձի սնանկացման համար,

ե. չի ներկայացնում իր կողմից ներդրվող դրամական միջոցների ծագման աղբյուրների վերաբերյալ բավարար և ամբողջական հիմնավորումներ (փաստաթղթեր, տեղեկություններ և այլն),

զ. այնպիսի իրավաբանական անձի մասնակից է հանդիսացել, որի՝ շահումով խաղերի կամ ինտերնետ շահումով խաղերի կամ խաղատան կազմակերպման լիցենզիայի գործողությունը վերջին երեք տարվա ընթացքում դադարեցվել է՝ որպես պատասխանատվության միջոց.

2) չի հանդիսանում այնպիսի իրավաբանական անձ՝

ա. որի նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետերը, փայատերը կամ մասնակիցը կամ տնօրենը համապատասխանում է սույն կետի 1-ին ենթակետի պարբերություններից որևէ մեկին,

բ. որը գտնվում է սնանկացման վարույթում,

գ. որի գործունեությունը նախկինում պատճառ է հանդիսացել խաղատան, շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի կազմակերպչի կամ այլ անձի սնանկացման համար,

դ. որի՝ շահումով խաղերի կամ ինտերնետ շահումով խաղերի կամ խաղատան կազմակերպման լիցենզիայի գործողությունը վերջին երեք տարվա ընթացքում դադարեցվել է՝ որպես պատասխանատվության միջոց,

ե. որը չի ներկայացնում իր կողմից ներդրվող դրամական միջոցների ծագման աղբյուրների վերաբերյալ բավարար և ամբողջական հիմնավորումներ (փաստաթղթեր, տեղեկություններ և այլն):

6. Հայտարարագրին կից ներկայացվում են հայտարարագրում նշված բոլոր ֆիզիկական անձանց՝ անձը հաստատող փաստաթղթերի պատճենները, ինչպես նաև արտասահմանում գրանցված իրավաբանական անձանց գրանցումը հավաստող՝ պատշաճ կերպով վավերացված փաստաթղթերը՝

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Հայտարարագիրը լրացնելու ամսաթիվը, ամիսը, տարեթիվը

Հայտարարագիր ներկայացնող _____

(ստորագրությունը)

_____

(անունը, հայրանունը, ազգանունը, անձնագրի տվյալները)

(ձևը լրաց. 25.08.16 N 912-Ն)
(հավելվածը լրաց. 25.08.16 N 912-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Դ. Հարությունյան

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2015 թվականի
ապրիլի 30-ի N 464-Ն որոշման

Ձև

ԱՆՁԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ ՂԵԿԱՎԱՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒՑ ՀԵՏՈ ՍՏՈՒԳՈՒՄ ԱՆՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐԸ

1. Կազմակերպչի տվյալները՝
1) անվանումը
2) պետական գրանցման համարը
3) ՀՎՀՀ-ն
4) լիցենզիայի համարը
5) գտնվելու վայրը
6) գործունեության իրականացման վայրը
7) կապի միջոցները՝
ա. հեռախոսահամարը
բ. էլեկտրոնային փոստը
2. Կազմակերպչի ղեկավար պաշտոնում նշանակված անձի տվյալները՝
1) անունը, հայրանունը, ազգանունը
2) անձնագրի տվյալները (սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել)
3) պաշտոնի անվանումը
4) պաշտոնական գործառույթների նկարագրությունը
5) պաշտոնում նշանակման ամսաթիվը
6) պաշտոնում նշանակման հիմքը (հրամանը, արձանագրությունը և այլն)
7) ղեկավար պաշտոնում նշանակված անձի՝ 4 x 6 չափսի երկու լուսանկար
3. Սույն հայտարարագիրն ստորագրելով և լիազոր մարմին ներկայացնելով՝ հայտարարում և հավաստում եմ, որ ղեկավար պաշտոնում նշանակված անձը չի հանդիսանում այնպիսի ֆիզիկական անձ, որը՝
1) դիտավորությամբ կատարված հանցագործության համար ունի դատվածություն, և դատվածությունն օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված չէ.
2) օրինական ուժի մեջ մտած դատավճռով զրկվել է ֆինանսական, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ զբաղեցնելու իրավունքից.
3) սնանկ է ճանաչվել և ունի չմարված (չներված) պարտավորություններ.
4) նախկինում պատճառ է հանդիսացել խաղատան, շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի կազմակերպչի կամ այլ անձի սնանկացման համար:
4. Հայտարարագրին կից ներկայացվում են՝
1) ղեկավար պաշտոն զբաղեցրած անձի՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը.
2) ղեկավար պաշտոնում նշանակելու համար հիմք հանդիսացած փաստաթղթի (հրաման, արձանագրություն և այլն)՝ կազմակերպչի կողմից հաստատված պատճենը:
5. Հայտարարագիրը լրացնելու ամսաթիվը, ամիսը, տարեթիվը

Հայտարարագիր ներկայացնող _____
(ստորագրությունը)

(անունը, հայրանունը, ազգանունը, անձնագրի տվյալները)

(ձևը լրաց. 25.08.16 N 912-Ն)
(հավելվածը լրաց. 25.08.16 N 912-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Դ. Հարությունյան